

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԹԵՂԱԼՈՒՅՍՈՎ ՀՈԳԵՆՈՐՈԳՎԱԾ

«Դատարվճիռ է կանթեղի վառումը, որ Զրիստոսի գերեզմանի վրա է: Նրա մասին ասում են, որ հայոց լուսավորիչ Գրիգորի խնդրանքով, առանց մարդու ձեռքերի ու տեսանելի կրակի՝ Աստծու հրամանով վառվում է ամեն Զարկին, որ մինչև այսօր լինում է»:
(Կիրակոս Գանձակեցի)

Զրիստոսի լուսահորդ գերեզմանի վրա վառվող կանթեղալույսով հոգեմորոգվելու ուխտով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնօրիմությամբ ու օրհնությամբ զարկական փոներին Երուսաղեմ մեկնեցին Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Ս. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Ս. Դերենիկ վարդապետ Դավթյանը, Վեհափառ Հայրապետի օգնական Հոգեշնորհ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Տոնիկյանը և ՀՀ վարչապետի՝ կրոնի գործերով խորհրդական պարոն Ռազմիկ Մարկոսյանը:

Աստվածակոխ Սուրբ Տեղեր ուխտի գնալը մշտավառ երազանք է յուրաքանչյուր հայի համար: Երուսաղեմի ուխտավոր է եղել Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որը 7 փարի ճգնելուց հետո՝ Զարկի ճրագալույցին մոտեցել է Տիրոջ Սուրբ Գերեզմանին: Այդ պահին Տիրոջ հրամանով վառվել են այնպեղ կախված բոլոր կանթեղները, և մեր հավաքի հայրը երգել է «Լոյս գուարթ»-ը, որը մինչև օրս հնչում է մեր եկեղեցիներում: Տնօրինական սուրբ վայրերից զորություն են ստացել մեր թարգմանիչ վարդապետները, Եկեղեցու հայրերը, հայոց արքաներն ու իշխանները և բազմաթյուր հայրնի ու անհայր հայ քրիստոնյաներ:

Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի կողմից քրիստոնեական սրբավայրին վայել ասպնջականությամբ ընդունվեցին մեր միաբան եղբայրները: Սուրբ Հակոբյանց միաբանության վանական հյուրընկալը բարեհաճորեն դիմավորեց ուխտավորներին: Ապա նրանց առաջնորդեց Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարի շուրջը գտնվող ինը մատուռներ՝ Ս. Էջմիածնի, Գլխաղիի Ս. Հակոբոս, Ս. Մինաս, Ս. Մակար, Ս. Սյուրբանուս, Ս. Նշան, Ս. Առաքելոց, Ս. Համբարձման, Ս. Պողոս և Ս. Պետրոս սրբարաններ:

Ավագ շաբաթը աղոթքներով ու սաղմոսասացությամբ բացվեց մեր ուխտադիր միաբանների համար:

Ավագ հինգշաբթի, վաղ առավոտյան, նրանք այցելեցին Սողոմոնի փաճար, իսկ ժամը 9-ին հասան Սրբոց Հակոբյանց վանք՝ միջօրեին մասնակցելու ընթրյաց Ս. Պատարագին, որ մատուցվեց ձեռամբ Գերաշնորհ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի: Այնուհետև կատարվեց Ուրնվայի հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում Ամենապատիվ Ս. Թորգոմ

արքեպիսկոպոս Մանուկյանը, ի նշան քրիստոնեական խոնարհության, լվաց նաև ուխտավոր եղբայրների ուրբերը:

Նույն օրը, ժամը 17.00-ին, ուխտավորները հավաքվեցին Աննա քահանայապետի տան տեղում կառուցված Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, որը Քրիստոսի առաջին բանտն էր, և աղոթեցին այն ձիթենու մոտ, որին կապեցին և ձաղկեցին Հիսուսին՝ նախքան քահանայապետի մոտ տանելը: Այնուհետև ուխտավորները եր դարձան Ս. Հակոբյանց եկեղեցի, որտեղ ժամը 19.00-ին սկսվեց Խավարման սրբազան արարողությունը:

Ավագ շաբաթ օրը մեր միաբան եղբայրները մասնակիցը դարձան սուրբ գերեզմանի լույսը հանելու հանդիսության:

Ավագ ուրբաթ, գիշերը, Ս. Հարության տաճարի փակված դուռը չբացվեց մինչև Ավագ շաբաթվա առավոտյան ժամը 8.00: Առավոտյան ժամը 7.30-ին Ս. Հարության տաճարի երկու դռնապաններ բերեցին բանալիները Հայոց Վանք և հանձնեցին Ավագ թարգմանին: Տարբեր ազգի ուխտավորների խոնված բազմության առջև մի քանի վարդապետներ և սարկավազներ Ավագ թարգմանի գլխավորությամբ և տաճարի դռնապանների ընկերակցությամբ գնացին Ս. Հարության տաճար և բացեցին փակ դուռը:

Ժամը 11-ին Ս. Հարության տաճարի հունաց տեսուչը վառվող մի լապտեր բերեց և գեպեղեց Ս. Գերեզմանի վրա, ապա դուռը կնքվեց մեղրամոմով ու ժապավենով:

Այնուհետև սկսվեց հույների եռադարձ թափոը Ս. Գերեզմանի շուրջ: Երբ երկրորդ անգամ հունաց թափոռապետը հասավ հայոց տեսչարանի դիմաց գրավող սյուների, հայոց լուսահան վարդապետը, ձեռքին մի փունջ մոմ, ընթերակա սարկավազների հետ միացավ հունաց հանդիսապետին և միասին կրեցին Ս. Գերեզմանի կնքված ժապավենը և մտան գերեզմանապարտ: Սուրբ Գերեզմանի առջև աղոթելուց հետո այնտեղ վառվող կանթեղից վառեցին իրենց մոմերը և հրեշտակի վնի մոտ գրավող երկու բոլորածև բացվածքներից զանգերի դողանքների ներքո լույսը փոխանցեցին Հայոց Վերնապուն, որտեղից Ս. Գերեզմանին նայող առաջին պատուհանից Հայոց հանդիսապետը իր ստացած մոմերի լույսով օրհնեց ժողովրդին: Այնուհետև նա իր ձեռքի մոմերով վառեց Ղպրի և Ասորի Եկեղեցիների հոգևորականաց մոմերը և առաջնորդեց նրանց Հայոց տեսչարան: Սուրբ Գերեզմանի լույսով վառվեցին նաև տաճարի նախապես շիջված բոլոր կանթեղները:

Հոգեպարար այս արարողությունից հետո հայ հոգևորականության դասը, ղպրի և ասորի հոգևորականության հետ երգեցիկ թափոր կազմած, երեք անգամ պարվեց Քրիստոսի Սուրբ Գերեզմանի շուրջ: Ժողովուրդը հոգևոր դասի հետ երգում էր «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ժամամուտը և «Ընդ արշալոյսն առաւօտուն» շարականը: Լուսաբուխ Ս. Գերեզմանը խնկարկելուց հետո՝ բոլորը նույն հանդիսությամբ վերադարձան վանք:

Ջարկի առավոտյան, Վերնապունից իջնելով, միաբանության թափորը ղպրիների և ասորիների մասնակցությամբ ուղղվեց Ս. Գերեզման, որի շուրջ երեք անգամ դառնալուց հետո շարունակեց ժամերգությունը: Քրիստոսի Հրաշափառ Հարության տունին Սուրբ Հարության տաճարում Ս. Պարարագ մարտից Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը:

Հընթացս Ս. Պարարագի հնչեց Սրբազան Հոր՝ օրվա հանդիսությանը պարշառ սրտառու խոսքը, որում ի մասնավորի ասաց. «Փառք եմ տալիս հարուցյալ Փրկչին, որ գե-

ղեցիկ առիթ պարզենց մեզ խոնարհիվելու ու երկրպագելու հարության այս սրբազնասուրբ Տեղին, որտեղ Միսուս, խորպակելով մահը, կրանք պարզենց հանուր մարդկությանը: Ահավարիկ, Աստուծո կամոք, երջանկություն ունեն խոնարհիվելու կենսապարզ սրբաբանում և Սուրբ Պարարագ մարտցելու, ինչպես ևս պարարագվելու հանուն մեր հավաքքի վկայության:

Երախտապարտ ենք Տայոց Տայրապետին՝ մեզ այսպեղ առաքելու և մեր ուխտը ևորոգելու համար: Ընորհակալություն Ամենապարիվ Տ. Թորգոմ Պարրիարքին՝ սուրբ րեղերը երկրպագելու քացաղիկ առիթն ընծայելու համար:

Այդ, մենք գրկվում ենք մի քարի առջև, որն ունի իր հարուկ լիզուն: Այն խոսում է հավաքքի, սիրո և հույսի մասին: Երկրպագելի այս քարը Բրիստոսի անսովեր ենթակայությունն է և Նրա կենդանի շունչը: Այս քարն ունի Բարձրյալի արյան գիծն ու գույնը: Այդ հավաքքով սալառագիւլած առաքյալները Բրիստոսի հարության մշտաբարբառ քարոզիչներ դարձան և աշխարհով մեկ տարածեցին Բրիստոսի կենսաքեր լույսը: Բրիստոսի հարությունը ևրանց համար շոշափելի դարձրեց Տիրոջ քարոզած վարդապետությունը: Բրիստոսի հարությամբ զորեղացած առաքյալները, հավաքքի ենթոգործուն առաջնորդությամբ մարտիրոսվելով, դարձան ամենավալկրակյան վկաները Տիրոջ հարության:

Ինչ ուժով քրիստոնեությունը վերափոխեց աշխարհը, և ի՞նչ ուժով ևվանդեցին հեթանոս սրտերը: Հարության ոգով ու հարության շնչով: «Եթե Բրիստոս չից յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հասարթն ձեր: Եւ գրաւնիցիմք սուր վկայք Աստուծոյ» («Եվ եթե Բրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավաքը: Եվ Աստուծո սուր վկաները եղած կլինենք») (Ա Կորնթ. ԺԵ 14-15):

Այսօր՝ հարության այս կենսապարզ րոնիկ, թափուր գերեզմանից ելած հարուցյալ Բրիստոս շրջում է մեր մեջ և Իր խաղաղությունն ու սերն է ավելում մեզ: Նրա ձայնը հասու է մեզ, քանզի հավաքում ենք Նրան, զգում Նրան մեր սրտերում, ապրում ու զորեղանում աստվածային սիրով:

«Եւ մեր այսօր գուարճացեալք, պայծառացուք րոնիս ընդ հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք զիրկս սիրով և միաբան գոցեացուք. «Բրիստոս յարեալի մեռելոց»: Հարության հրաշքը Բրիստոսի մարդեղության խորհրդի զագաթն ու պսակն է, քրիստոնեական վարդապետության սիրուրը: Միսուսի մահվամբ և հարությանը է պայմանավորվում մեր փրկությունն ու անմահությունը: Միսուսի հարությունը դառնում է մեր վերակենդանության անատարկելի առհավաքյան: Մենք վերագրվում ենք մեր անմահությունը Միսուս Բրիստոսի հարությանը:

«Ճաղաղութիւն ընդ ձեզ, եւ եւ, մի՛ երկնջիք» («Ճաղաղութիւն ձեզ, եւ եւ, մի՛ վախեցէք») (Ղուկ. ԻԴ 36): Այս ձայնը այսօր ևս հնչում է ամենուր: Այսօր Բրիստոսով մարմնավորված ճշմարտությունը ևվանել է երկիր մոլորակը: Չիտրորվենք ու ջնդվենք այդ ճշմարտությունից, որպեսզի դուրիս լինի մեր ընթացքը այս մոլորակի վրա, որպեսզի ընթանանք Տիրոջ ընդառաջ, սիրով պարասխանենք Նրա սիրուն, որպեսզի Հարության րոնի օրը գերեզմանի չարիքը, և հարություն

առնեն հույսն ու սերը: Միայն այս կերպ հաղթանակած կլինենք մահին և կարող ենք վարսահորեն ասել. «Ընկյալ մահ ի յաղթութիւն. Ո՛ր է, մահ, յաղթութիւն քո, Ո՛ր է, դժոխք, խայթոց քո» («Մահը կու գնաց յաղթութեան: Ո՛ր է, մահ, քո յաղթութիւնը, ո՛ր է, գերեզման, քո խայթոցը») (Ա Կորնթ. ԺԵ 55):

Աստիճապարկեր մարդը երկու ծնունդ ունի՝ մորից և սուրբ ավագանից: Մեր մայրերից արացած կյանքը նման է թարշամող խորի, միայն Տիսուսով տրված կյանքն է անմահագին: Մեր ազգը դեզերեց և հարյալ: Այսօր Բրիտանուարտը իր կյանքով հայրությունը պիտի տոնի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամյակը: Մի րոպե սպասում ենք ամենքիդ Միածնաէջ սրբավայրում՝ ազգովի տոնելու մեր պարունության այդ լուսապարզ Էջը: Ինչպես Բրիտանու, հայերը ևս մահ տեսան, սակայն Հայաստանը մահ չտեսավ, մնաց անմահ, քանզի հայրություն առավ, ինչպես Տերը: Մենք մեր մաքառման պարունությամբ քրիստոսյան Հարության հրաշագան արտացոլքը եղանք: Մեր պարունությունը քանի՜ Ավագ Ուրբաթ ունեցավ, անհամար ձորեր Գեթսեմանիներ դարձան, հայոց լեռները՝ Գողգոթա, սակայն չգերեզմանվեց հավարքը մեր քրիստոսյան և հայրենիք-հողակտորը մեր աստվածարարը:

Մենք, որպես Գողգոթայով անցած ժողովուրդ, այսօր առավել ևս պարտավորված ենք հայրությամբ սպրելու, հայրությամբ կերպելու մեր կյանքի միաշաքթին: Հայրությունը հայի համար հույսի տոն է, որովհետև հայրությունը երկրորդ անգամ տեղի ունեցավ հայոց հողի վրա: Այսօր Հայաստան երկիր ուխտավայրը կանչում է ձեզ: Եկե՛ք Էջմիածին, որպեսզի նորեն տոնենք մեր հայրությունը, քանզի «Ի վերայ աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ. քանզի Արարարեան զաւառին բոխեացին Հայոց շնորհք պարտիւրանացն Աստուծոյ»:

Աշխարհով մեկ սփռված մեր եկեղեցիների զանգերի դողանջունն այսօր երկիր մոլորակով մեկ ավելում է. «Քրիստոս յարեալ ի մեռելոց: Փա՛ռք յարութեան Զո, Տէ՛ր»: Եվ այս ձայնը, արձագանքվելով մեր հոգիներում, հնչում է որպես պարասիսան. «Ես ոչ դադարեցայց օրհնել զԶեզ, Տէ՛ր, զամենայն ատուրս կենաց իմոց»:

Ուրեմն եկեք այսօր միաբերան ու միակամ ասենք. «Նորացուցէ՛ք զօրհնութիւն յարուցելոյն ի մեռելոց, որ նորոգեացն զրիեզերս: Եկայք ժողովուրդք, նոր օրհնութիւնս երգեսցուք, երգեսցուք երգ նոր Աստուծոյ Փրկչին մերոյ»:

Պարարագի ավարքին ուխտավորները հավաքվեցին Պարիիարքարանի դաշիժում և սրացան Սրբազան Պարիիարքի օրհնությունը: Նույն օրը Սրբոց Հակոբյանց վանքի բակում տեղի ունեցավ Երուսաղեմի մեծ անդաստանի արարողությունը:

Զարկի երկուշաբթի, առավոտյան ժամերգությունից հետո, մեր ուխտավոր միաբանները ներկա եղան Ս.Հակոբյանց Մայր Տաճարում Ամենապարիվ Սրբազան Հոր մարտոցած Ս. Պարարագին, հընթացս որի հնչեց Ամենապարիվ Պարիիարքի քարոզը: Պարարագի ավարքին դպիրները և միաբանությունը, ձեռքներին ունենալով մասնապուրկների մեջ պաշվող սրբոց մասունքներ, թափոր կազմեցին՝ ուղղվելով դեպի Պարիիարքարան: Այսպեղ

Մայր Աթոռի միաբաններն ստացան Պապրիաբք Հոր բարեմաղթանքներն ու օրհնված նշխարը:

Ջափկական փոներից հետո մեր ուխտավորները շրջեցին Տնօրինական սրբավայրերում: Ուխտավորաբար այցելեցին Հորդանան գետ, Եդիսեի աղբյուրից ջուր խմեցին, բարձրացան Փորձության լեռ և փեսան Մեռյալ ծովը, անցան Գալիլիայով, բարձրացան Թաբոր լեռ, որտեղ Հիսուս ասաց «Լեռան քարոզը»: Շրջեցին Տիբերիա լճի ափերին, մարան ափամերձ մաքրում, որտեղ Հիսուս բանալիները հանձնեց Պետրոս Առաքյալին՝ հովվելու համար հավատացելոց: Տեսան Աստվածածնի հղության վայրը, Կանայի հարսանքատունը, եղան Ս. Պետրոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փնեքում:

Նրանք այցելեցին նաև փերունական սրբարեղիներ՝ Բեթղեհեմ, որտեղ Դերենիկ և Թորգոմ Հայր Սուրբերը Պապարագներ մատուցեցին Աստվածածնի գերեզմանին՝ ննջման վայրում: Նկո Նրանք բարձրացան Համբարձման լեռ, իջան Գեթսեմանիի ձորի Սուրբ Աստվածածնի եկեղեցի և Հայոց պարտեզ, փեսան Պրոքարիկեի ավազանը և անցան Խաչի ճանապարհով:

Ուխտավորները շաբաթվա մյուս օրերին՝ կիրակիից սկսած հաջորդաբար ծնրադրեցին և իրենց հոգեմրմունջ աղոթքներն առաքեցին առ Աստված Ս. Հակոբյանց վանքի Ավագ խորանում՝ նախանձի ախտից մաքրվելու համար, Սուրբ Հրեշտակապետաց փառարում բարկությունից գերծ մնալու համար, Ս. Հակոբյանց վանքի շրջափակում գտնվող Ս. Էջմիածին եկեղեցում, որտեղ մատուցվեց Պապարագ՝ ընդդեմ հայարարության, Գեթսեմանիում՝ Տիրամոր գերեզմանին՝ ընդդեմ բղջախտիության, Ս. Փրկիչ եկեղեցում՝ ընդդեմ ազախության, Ս. Հովհաննես եկեղեցում՝ ընդդեմ որկրամոլության, Սուրբ Գլխադիրի եկեղեցում՝ ընդդեմ ծուլության: Երկյուղածությամբ մարան Խաչգյուտի քարայր:

Նրանք ուխտավորաբար այցելեցին նաև Աննա քահանայապետի փան զավթի փեղում կառուցված Սրբոց Հրեշտակապետաց վանք, որի մոտ եմ գտնվում ձիթենին, որին կապեցին Հիսուսին, առաջին բանորը, ուր փարան Հիսուսին դադարապարտելուց առաջ, փեսան Օվսանայի քարը: Աղոթք առաքեցին առ Աստված Կայիափայի փան փեղում կառուցված Ս. Փրկչի վանքում, որ կոչվում է Երկրորդ բանոր: Նրանք աղոթամրմունջ ու գլխահակ կանգնեցին Չաղանաց սյան և Չարչարանաց սեղանի մոտ:

Մեր միաբան եղբայրներն այդ վայրերում «մոռանային զամենայն վիշտս և զպրտմութիւն աշխարհիս» և «սրբէին զմեղս իւրեանց ի ձեռն ապաշխարութեան, պահոց և ողորմութեան, քննութեամբ զփիւ և զգիշեր անհանգիստ ուղեգնացութեամբ» (Մեքեոս):

Այսօր ևս շարերիս բաղձանքն է *«ուխտիս գնալ յաստուածակոխ քաղաքն մեր Երուսաղէմ՝ յերկրպագութիւն լուսաբոխի սուրբ գերեզմանին Բրիսպոսի և այլոց սուրբ փնօրինականացն, որ անդ»* (Միմեոն Լեւեացի):

ՆԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ